ԱՐՊՀ-Ն 1999—2000 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1999—2000 թթ. ԱրՊՀ ներքուհական կյանքը հագեցված ու բովանդակալից էր կարևոր իրադարձությունների առումով:

Նախ ուսումնական տարին սկսվեց կարևոր տոնակատարությամբ: Լրացավ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի հիմնադրման 30-ամյակը: Բարձրագույն ուսումնական հաստատության ստեղծումը Արցախում հեռավոր 1969 թ. և հատկապես ազգային-ազատագրական շարժման վերածնունդի տարիներին, խաղացել է ճակատագրական դեր ժողովրդի կյանքում:

Այդ է վկայում այն փաստը, որ ԱրՊՀ-ի սովորողների թիվը, որը 1969 թ. 132 էր, այսօր հասնում է 1800-ի: 1969 թ. մասնաճյուղում աշխատում էր ընդամենը 8 դասախոս, իսկ այսօր պրոֆեսորադասախոսական կազմը բաղկացած է 200 հոգուց: ԱրՊՀ-ն իր գոյության ընթացքում ժողովրդական կրթությանը, գիտությանը և տնտեսությանը տվել է ավելի քան 10 հազար մասնագետներ: Ուստի այս ձեռքբերումները որքան ուրախալի, այնքան էլ պարտավորեցնող են:

Այնուհետև հունվարին ԱրՊՀ ողջ պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողությունը հանդիսավոր նշեցին բանաստեղծ, գրականագետ ԱրՊՀ հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Սոկրատ Աղալարի Խանյանի ծննդյան 70-ամյակը: Հոբելյարին իրենց շնորհավորանքներն ու մաղթանքները մատուցեցին ԱրՊՀ-ին կից վարժարանի կոլեկտիվն ու սաները, օր անց երախտիքի ու մեծարանքի երեկոն տեղափոխվեց ԱրՊՀ նիստերի դահլիճ: Բազում-բազմաթիվ շնորհավորական ելույթները միայն մի բան էին փաստում. Սոկրատ Խանյան-բանաստեղծի, գրականագետի, մանկավարժի մեծ ավանդը համալսարանական կյանքում:

Հաջորդ կարևոր իրադարձությունը ԱրՊՀ-ում Արցախյան շարժման 12-րդ տարեդարձին նվիրված ուսանողների և ասպիրանտների միջբուհական գիտական կոնֆերանսն էր: Այն տեղի ունեցավ փետրվարի 25—26-ին: Կոնֆերանսին մասնակցում էին ինչպես ԱրՊՀ-ի, այնպես էլ ԵՊՀ-ի ուսանողական միության անդամներ՝ նախագահ Աշոտ Ալեքսանյանի գլխավորությամբ և ՀՅԴ Նիկոլ Աղբալյան ուսանողական միության անդամներ, ատենապետ Խաչատուր Ստեփանյանի գլխավորությամբ:

Գիտական կոնֆերանսի կազմկոմիտեի անդամներն էին ԵՊՀ ռեկտոր, ակադեմիկոս Ռ. Մ. Մարտիրոսյանը, ԱրՊՀ ռեկտոր Պ. Ս. Գևորգյանը, ԵՊՀ պրոռեկտոր, ակադեմիկոս Էդ. Վ. Զուբարյանը, ՀՀ կառավարությանն առընթեր տարածաշրջանային ինտեգրացման վարչության պետ Ա. Ա. Աղաբեկյանը, ՀՀ պետական ԲՈՒՀ-երի ռեկտորների խորհրդի քարտուղար Կ. Ի. Աբայանը և այլոք: Կոնֆերանսի առաջին օրը, պլենար նիստում լսվեցին Պ. Ս. Գևորգյանի, Ա. Ս. Ալեքսանյանի և Ա. Բ. Զաքարյանի զեկույցները, հնչեցին այլ ելույթներ:

Կոնֆերանսի 2-րդ օրը անցկացվեցին աշխատանքներ տարբեր բաժանմունքներում: Այնուհետև իմի բերվեցին և ամփոփվեցին կոնֆերանսի արդյունքները: Հիրավի, լուրջ և դրվատանքի արժանի աշխատանք էր կատարված:

Եվ վերջապես, մայիսի 10—11-ին, ԱրՊՀ-ում կազմակերպվեց և հավուր պատ-

շաճի անցկացվեց Շուշիի ազատագրման 8-րդ տարեդարձին նվիրված հանրապետական գիտական կոնֆերանս:

Կոնֆերանսի առաջին օրը, մայիսի 10-ին տեղի ունեցավ լիագումար նիստ, որի ժամանակ հնչեցին ողջույնի խոսքեր ու զեկուցումներ: Գրող-հրապարակախոս Զ. Բալայանը շնորհավորեց և ողջունեց կոնֆերանսի մասնակիցներին նման լուրջ միջոցառման կազմակերպման ու անցկացման կապակցությամբ:

Այնուհետև ընդունված կարգով ու հաջորդականությամբ անցկացվեցին աշխատանքներ բաժանմունքներում:

Մայիսի 11-ին լիագումար նիստում արդյունքների ամփոփումը փաստեց, որ կատարվել է բավական մեծ ու պատասխանատու աշխատանք: